48. ԱԼԱՋԱ ԵՋ

Կէղի, չէղի մե թագավորմ կէղի։ Թագավորին իրեք տղա կէղի։ Տղեքներ կմեծանան, սար ու ձոր կէրթան։

Թագավոր կկղանչա տղեքներուն կըսա.— Ո՞ր ախպըրից օր ճուր կխմեք, ֆլան ախպրի ճրից չխմեք։

Ճոչ տղեն գնաց զվռնելու, գնաց խոր ասած ախպրի վրեն նստավ, հաց կերավ, ճուր խմեց, աչքին հ՚առեճով մի խաղալմ փախավ։

Էլավ ձին խեծավ, խաղալի (վայրի եզ) ետև ընգավ, լարեց, սարի գլոխ հանեց. մե տունմ կար էգ սարի գլոխ. խաղալ տուն մտավ, ախչկա կերպարանք դարձավ։

Թագավորի տղեն դուռ կայնավ, կղանչեց.— Ո՞ր կա տուն։

Ախչիկ ձեն տվեց, ըսաց.— Ո՞ր կխարցուս։

Ըսաց.— Իմ խաղալ տուն մտավ, բռնեք ինձի տվեք։

Ըսաց.— Մեկ ձիուց իջի, տուն արի, մե քիչ հաց կե, ռհաթի, էլի առ քու խաղալ, գնա՛։

Տղեն ձիուց իջավ, տուն գնաց։ Խաց բերեց ախչիկ, տղեն կերավ։

Ախչիկ սաթրեջ (սաթրանջ — խաղի գործիք) բերեց, տղին ըսաց.

— Խաղանք, թե դու ինձի տարար՝ քու խաղալ կտանիս, ինչ կուզես կէնես, թե ես քեզի տարա, ինչ կուզիմ, էն կէնիմ քեզ։

Սաթրեջ խաղցան, տղին տարավ։ Տղին ասավ.

— Ես քեզի խնայեցի, ել, քու խազալ էս մութ քունջն է, բռնի՛ տար։

Տղեն գնաց օր բռներ խազալ, էն դեն խոր մը կար, ախչիկ հոլընգեց (գլորեց), տղեն խորի մեջ ընկավ։

Էդ դիշեր տղեն տուն չդնաց։ Միջնեկ ախպեր ըսաց.

— Իմ ախպեր ընչի՞ էսօր տուն չէկավ։

Էլավ ձին խեծավ, գնաց էդ ախպրի վրեն, իջավ էնտեխ, մի քիչ խաց կերավ, ճուր խմեց, խազալ հ՚առեճով փախավ։ Ձին խեծավ, խազալի ետև ընկավ։ Սարի գլոխ էլավ, դուրանմ կար, էդ դուրան տեխ տունմ կար, խազալ տուն մտավ, դարցավ ախչկա կերպարանք։

Տղեն դուռ գնաց, բոռաց.— Ո՞ր կա տուն։

Ախչիկ շուտ ձեն տվեց.— Ո՞ր կխարցուս։

Ըսաց.— Իմ խազալ դաս մտավ։

Ըսաց.— Քու խազալ զավթող (գրավող) չկա։

Ըսաց.— Իմ խազալ բռնեք ինձի տվեք։

Ըսաց.— Էս տուն ա, իջի խաց կեր, գնա։

Տղեն ձիուց իջավ, տուն գնաց, ախչիկ խաց բերեց, տղեն կերավ, ըսաց.

— Իմ խազալ ինձի տու, ես կէրթամ։

Ախչիկն ըսաց.— Մե սաթրեջմ խաղանք, թե դու տարար, քու խազալ կիտամ կտանիս, թե չտարար՝ չըմ իտա։

Սաթրեջ բերեց ախչիկ, խաղցան։ Ախչիկ տարավ։

Տղին ըսաց.— Քըզի բաշխեցի, քու խազալ էնա դեն ա՞, գնա բռնի տար։

Տղեն օր գնաց, ախչիկ հոլընգեց, էն լէ խոր ընկավ։

Միջնեկ տղեն լէ էն գիշեր տուն չգնաց։

Պստիկ տղեն օր տեսավ երկու ախպեր լէ չէկան, սեյիսին ըսաց.

— Մե լավ ձիմ ինձի քաշա։

Սեյիս գնաց մե լավ ձիմ թավլից դուս քաշեց։

Տղեն խեծավ ձին, էլավ էդ ախպրի վրեն, դնաց իջավ ախպրի վրեն, մե քիչ խաց կերավ, ճուր խմեց, խազալ հ՚առեճով փախավ։

Տղեն էլավ ձին խեծավ, խաղալի ետև գնաց։ Մեյ քիչ տեխ գնաց, խազալին բռնեց, ըսեց ինք ուրին. «Բռնելով բան չէղնի, կէղնի օր էդի է իմ ախպրտիք կորցեռ». խազալն թորկեց։ Խազալի

Նտեեն գնաց։ Սարի գլոխն օր էլավ, գուրանմ կար, դուրնի մեջ տուն մի կար, խազալ տունը մտավ։

Պզտիկ տղեն գուռ կայնավ, բոռաց.— Ո՞ր կա տուն։

Ախչիկ ձեն տվեց.— Ո՞ր կխարցուս։

Ըսաց.— Իմ խազալ էստեխ մտավ, ինձի տուր։

Ըսաց.— Քու խազալին ղավթող չկա, իշի տուն, քիչմ խաց կե, գնա։

Տղեն ձիուց իջավ, տուն գնաց, խաց բերեց ախչիկ, տղեն խաց կերավ, ըսաց.

— Իմ խազալ ինձ տու, ես կէրթամ։

Ըսաց.— Մե սաթրեջ խաղանք, քու խազալ քեզ իտամ, գնա։ Սաթրեջ բերեց, տղեն ըսաց.— Ինչո՞վ խաղանք։

Ախչիկն ըսաց.— Թե դու տարա՞ր, քու խազալ կառնես, ինչ կէնես, կէնես, թե ես տարա, ես էլ քըզի ինչ կէնեմ կէնեմ։

Սաթրեջ գնեցին, խաղցան։ Տղեն ախչկան տարավ։

Էլավ խարցուց ախչկից.— Իմ ախպրտիք դու ես սպանե, քեղանե կուղիմ։

— Էրկու մարթ խոր թալեր իմ, քու ախպրտի՞ն ա, չըմ դինա։

Գացին խորու վրա, ախպեր ծեն տվեց։ Ախպրտիք խորու միջից ծեն տվեցին։

Չվան իջուց խորու մեջ, մեկ-մեկ ախպրտիք խանեց։ Ախչկա ունեցած, չունեցած ախպրտոց տվեց։ Ախպրտիք դարցուց ուր խոր մոտ։ Ինք մնաց ախչկա մոտ։ Տղեն ախչկան ըսաց.

— Դե՛, փարա բե՛ ուտենք։

Ախչիկն ըսաց.— Ունեցած, չունեցած տվիր քու ախպրտիք տարան։ Ես ունիմ մեկ Ալաջա եզ, յոթ տարեկան ա, կենա՞ս տանիս չարսուն ծախիս, տասնուչորս օսկի կիտան։

Տղեն էլ լուսուն գելլի, Ալաջա եզ հ՛առեճ կիտա։

Տանի քաղաք, կզվոցու։ Ոն օր կուգա, գուզա առնել, տասնուչորս օսկի կիսա գին։

Ախչիկ յոթ ախպեր ուներ։ Ախչկա յոթ ախպրտոց մեկը կտեսի օր ուրանց եզը էկե չարսուն, կծախվի։

Ախչկա յոթ ախպրտիք գող ին, ընգած ին սարեր, քարեր, քաղքներ գողութուն կէնին։ Ուրանց քուրոջ ըսեր ին թե՝ «Որ օր օր մեր Ալաջա եզը չարսուն բերին ծախին, էն դախ մենք դինանք օր դու ախթվեր ես, քու սեհրին (մոգություն) բոզմիշ (ավրել) էղե։

Էն մեկ ախպեր զուրանց եզն օր տեսավ, ըսաց. «Էրթամ իմ ախպրտոց ըսիմ, գանք եզան տեր բռնինք»։ Ախպեր գնաց ախ-պըրտոց ըսաց.

— Մեր եզ բերած ան չարսուն, կծախին։

Ախպրտիք կուգան օր եզան ծախող բռնին։ Մինչև կիգան, տղեն եզ կծախա։ Քաշեն ուրանց խանչլներ, տղեն կփախնա։ Կինգին տղի ետևեն, տղեն կփախի, մտի պառվու մը տուն։

— Յամա՜ն,— կըսա,— ընձի աղատա էս ղաչախների (ավազակ) ձեռնեց։

Նանեն կբերե էտոր շորեր կխանա, էդ տղին կդնա տաշտի մեշ օր լողկցու։

Ղաչախները դուռ կկանին.— Պառավ,— կասին,— մե տղա էկավ էս տեղ, ու՞ր է էն տղեն։

Պառավ կըսա թե.— Ես տղա չըմ տեսեր եմ, ես իմ մեկ ախչիկ, հանդե դներ եմ կլողկցում։

— Չէ՜,— կըսա,— բե տեսինք։

Պառավ տղին ախչկա շոր կհագցու, դուս կխանա։

Ղաչախներու մեծ ախպեր օր կտեսնա էդ ախչիկ, կըսա.

— Յամա՜ն, պառվու ախչիկ ուզեք ընձի։

Կըսին.— Պառա՜վ, քու ախչկա կալան (գլխագին) ուղա, քու ախչիկ տու մեր ճոչ ախպոր։

Պառավ կըսա.— Կանի էրթամ ախչկնից խարցում։

Պառավ կէրթա տղից կխարցու, կըսա թե.— Ղաչախներ կըսին թե, մեր ճոչ ախպեր աչք թալեց քու ախչիկ, պտի քու ախչիկ տաս մեր ճոչ ախպոր։

Տղեն կըսա.— Գնա՜, էրկու հարուր օսկի ուղա, ըսե կիտամ։

Պառավն ա կէրթա, կըսա։ — Հա՜, իմ ախչիկ կիտամ, էրկու հարիր օսկի կալան կառնիմ։

Ըսելուն, մեծ ախպեր ծեռ կտանի ջերն, էրկհարիր օսկի պառվուն կիտա։

Մի իրեք օր օր կուզա, օր շոր առնի։ Ղաչախներ կէրթան։

Պառավն օր տուն կմտի, կըսե.— Էրկհարիր օսկի տվին։

Տղեն կըսա.— Գնա՜, մե ծեռքմ ախչկա խալավ առ ընձի։

Կէրթա ծեռքմ շոր կառնի, կիգա տուն։

Տղեն կըսա.— Գնա՜, չըլընգչու (դարբին) մոտ ընձի մե լավ խանչալմ տու շիքել։

Պառավ կէրթա չըլընգչու մոտ մե լավ խանչալմ շիքել կիտա։

Էրկօր կլմննա, կիգան ղաչախներ զախչիկ տանին, ճոչ ախպոր վրեն պսակեն։

Իրիկուն օր պտի էրթա մոտ, ինչ տեսակ կէնա ճոչ ախպեր, պառվու ախչիկ չզրուցա։ Մինչև կես գիշեր ղաչախի ախպրտիք

օր կէրթան, ուրանց տներ կքնին, պառվու ախչիկ կէրթա ճոչ ախպոր մոտ, կըսա.

— Ընձի կճանչնա՞ս։

— Էմա՞լ չճանչնամ, դու պառվու ախչիկն իս, օր չճանչընի, քըզի կառի՞։

Կըսա.— Ես պառվու ախչիկ չեմ։

Կըսա.— Ապա դու ո՞ն ես։

— Ես Ալաջա եզան տերն եմ։ — Քաշա խանչալ, խանչալմ կզարկա, կէնա բրինդար։ Էն տնից դելի, քաղքի մեշ կէրթա։ Կէրթա համամչու մոտ, համամչին համամի դուռ նոր է բացե։

Համամչուն կըսա.— Համամչի, քու համամի էրես էսօր չե՞ս ծախե, մինչև վաղ էսա դախ։

Կըսա.— Կծախիմ։

— Ի՞նչ կուզես։

— Ոսկի մի։

Ոսկի մի կիտա համամչուն, համամչու շորեր կառնի ուրին, կըսա.

— Վաղ էսա դախ, արի քու շորեր առ։

Համամչին շորեր, բալնիս կիտա էդ տղին, կէրթա։

Սահաթի ութին ղաչախներ էլան, ըսին. «Էրթանք մեր ախպեր տեսինք»։

Գացին ուրանց ճոչ ախպոր տուն, տեսան օր տքոց կուդեր։ Ծեն տվեցին, ախպեր ծեն տվեց։

Ըսեցին.— Ախպեր, հ՞որի՞ կտքաս։

Ըսաց.— Էնի պառվու ախչիկ չէր, էնի Ալաջա եզան տերն էր, զարկեց ինձի էլ էնեց բրինդար (վիրավոր)։

— Էլեք.— ասին,— մըր ախպեր տանինք համամչու մոտ, համամչին հեքիմ կէղի։

Ախպեր վերցին, համամ տարան։ Տղեն համամի դուռ կանուկ էր։

— Բարըլուս քըզի, համամչի, մեր ախպեր կենա՞ս լավցուս, մեր ախպեր բրինդար ա։

— Հա՛, կաղեկցում, ընչի՞ չեմ կենա լավցում։

Տարան ներս դնեցին։

— Տաս ոսկի կառնիմ, ծեր ախպեր կսախցում. վաղ էսա դախ կսախցում, արեք ծեր ախպեր տարեք։

Տվեցին համամչուն, շուտով դառցան օր Ալաջա եզան տիրուն զվոնին։

Համամչին էտոր լավ դեղեց, համամի մեջ լողկցուց, մինչև սահաթ վեցին, գնաց խառցուց, ըսաց.

— Ընձի կճանչնա՞ս։

— Հա՜, ինչու չճանչնամ, դու մեր համամչին ես, ընձի ամադ (խնամք) տվիր, ընձի լավցուցիր։

— Ես համամչին չեմ։

— Ըպա դուն ո՞ն իս։

— Ես Ալաջա եզան տերն իմ։

Թաժա, յարեն թաժացուց։ Էլավ դուռ կանավ։

Համամչին էկավ. շորեր փոխեց, բալնիք համամչուն տվեց, ինք գնաց։

Համամչին դուռ կայնուկ էր, համամ չմտեր էր։ Ղաչախի ախպրտիք էկան, խարցին թե.

— Մեր ախպեր իմա՞լ ա։

— Ես ծեր ախպեր չեմ տեսի։

— Էրեկ էս դախ չբերի՞նք քըղի հանձնինք մեր ախպեր։

Ըսաց.— Էրեկ էս դախ, ես իմ համամ ծախեր ի։

Գացին համամ մտան, տքոց կիդեր։ Խարցին ուրանց ախպոր մոտեն, թե, էրեկ մենք քըղի էսոր թասլիմ չէնեցի՞նք։

Ըսաց.— Էնի Ալաջա եզան տերն էր։

Իրարու ըսեցին.— Էդմըլա չէղի, վերցունք մեր ախպեր, քաղքից խանենք, չոլ դնինք, կէղի օր Ալաջա եզան տեր բռնինք։

Վերցին ուրանց ախպեր, քաղքեն էլան, ուրանց ախպեր չոլ դրեցին։

Ալաջա եզան տեր էլավ, ախքտի շոր խաքավ, թեռ (պարկ) ըմ առավ ու չոլ գնաց։ Էտոնց մոտըցավ, կզի ու կշիտկի։

Էդոնցնե մեկը գնաց, հարցուց.— Ի՞նչ մարթ ես։

Ըսաց.— Ես ցան կժողվիմ։

— Ի՞նչ կենես։

— Տանիմ քաղաք ծախիմ։

— Օրական ի՞նչ կառնիս։

— Օրական մե չարեք (հինգ ղրշ.) կառնիմ։

— Օրական քըղի տաս ղուրուշ կիտանք, խաց էլ կե, մըզի արի ցան բեր։

— Շատ աղեկ, կիգամ։

Ցան ժողվեց, թեռան մեջ լցեց, էտոնց մոտ տարավ։ Մի էրկօր էդպես ցան ժողվեց, տարավ։ Էն մի օր գացեր էր հեռուն, ցան կժողվեր, մարթմ ձիու վրեն էկավ.

Է՞,— ըսաց,— իմ ծին առեր եմ հիսուն օսկի, կաժի՞,— խարցուց տղից ծիու տեր։

— Մե փարա լէ իմ մոտ չաժե։

— Ընչի՞ չաժե մե փարա լէ քու մոտ։

Ըսաց.— Քշա էս շադրի վրեն, ըսա. «Ես Ալաջա եզան տերն եմ». թե քու ծին էնոնց հ՝առեճեն էլավ, քու ծիուն գին կդնիմ ես։

Մարթ ծին քշեց, շադրին մոտըցավ.— Հը՞,— ըսաց,— ես Ալաջա եզան տերն եմ,— ծիու գլոխ դարցուց, փախավ։ Շադրի միջի դաշախներ թըվրնքներով վազան, էդի փախավ։ Էկավ էդ մարթի մոտով։

Ըսաց.— Քու ծին կաժի խարիր հիսուն օսկի։

Դաշախներ ետևեն կէրթան։ Ալաջա եզան տերը շուտ գնաց խարցուց ճոչ ախպոր.

— Ընձի կճանչընա՞ս։

— Կճանչնամ, մեր ցան բերողն ես։

— Ես ցան ժողվող չեմ, ես Ալաջա եզան տերն եմ։— Ու զարկեց սոլանեց։ Թորկեց էդ դիեն, կորավ գնաց։

Դաշախներ ծիավորին չխասան, ետ դարցան ուրանց շադր էկան։ Տեսան ուրանց ախպեր մեռուկ։ Վերցին ուրանց ախպեր բերին խորին։

Գացին թագավորի մոտ, թագավորին ըսին.— Դալալ տու կդանչել։

Թագավորը կդանչեց դալալին.— Թո՛ղ, Ալաջա եզան աերը ո՞ն ա, թագավորի մոտ իգա։

Ալաջա եզան տեր օր լսեց դալալի ձեն, թագավորի պալատ գնաց։ Դաշախներ վեց ախպերն լէ էդ դեն են։

Դաշախներ ըսեցին թագավորին.— Մենք էս տաս տարի դաշախություն կէնենք, էսըմլա մարթու մենք ռաստ չէկեր ինք։ Էդի մեր ախպեր սպանեց, դու ի՞նչ վճիռ կիտաս էդոր։

Թագավոր ըսաց.— Եթե վճիռ ընծի թորկեք, ես վճիռ էսպես կէնիմ. դուք դաշախ, էն լէ դաշախ, դուք վեցն եք, էնի մինակ ա, գացեք մե օշխրի մի դմակ բերեք, ես վճիռ կիտամ։

Գացին մե օշխրի դմակ բերեցին, թագավորին տվեցին։ Թագավորը մոհրը (կնիք) դըմկի վրա զարկեց, տվեց էդոնց, ըսաց.

— Կտանիք, կպահիք, ձեր դռներ չգնաք, ըաց մնա, թե էսա տղեն կերցավ գողցավ դմակ, սաբախտան ընձի շուտ բերեց, ծեր վեցի գլոխ կիտամ զարկել, թե չէ, էնոր գլոխ կդարկիմ։

Առան դաշախներ դմակ, ուրանց տուն գացին։

26—1086

Տղեն, մութն օր տվեց, էտոնց տներ գնաց։ Խինգի տուն գնաց, բան մի չիմցավ։ Գնաց մեկելի տուն, նվնվաց կատվի պես։

Մարթ կնկնից խարցուց թե.— Էն իրիկվան բերած դմակ դեռ՞ր ես դրե, կատուն չտանի։

Կնիկ մարթուն ըսաց.— Դներ եմ տաշտին մեշ, տաշտ դներ եմ թոնիր։

Էդ տեսակ ըսելով, կես սահաթ հ՚ընցավ մեջ, տղեն գողտուկ էկավ, ծեռ տարավ թոնիր, դմակ թորվընեն խանեց, առավ ու գնաց։

Առավ տարավ, մե սահաթից ետն մարթն իմցավ, կնկան ըսավ.

— Իշկա, տես, դմակ թոնիրն ա՞, թե տարած ան։ Կնիկ, իշկեց թոնիր, դմակ տարած ան։ Մարթն էլավ ախպրտոց ծեն տվեց. «Դմակ տարած ան»։ Էդ գիշեր էլան քաղքի մեշ որտեխ ղվռնեցին, տղին չի գտան։

Սաբահտան շուտ, սահաթ ութին տղեն դմակ թագավորին տարավ։

Թագավոր բերեց վեց ղաչախին գլոխ զարկեց։ Մե շատ փարա բաշխեց տղին։

Տղեն շնորհակալ էղնելով քաղքեն էլավ։ Դեպի ախչկա տուն գնաց։ Ձախչիկ վերուց խոր քաղաք գնաց։ Գնաց խոր տուն, թագավոր շատ ուրախացավ։ Բերեց տղին աղեկ հարսնիքի պատրաստուն տեսավ։

Յոթ օր, յոթ գիշեր հարսնիք էրավ։

Երկնուց իջավ իրեք խնձոր. մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ փայ էնողին։